«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

ԱՌԱՐԿԱ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆՈՒՇ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Վ. ԹԵՔԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 92 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...……...3

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Ինտեգրումը կրթական գործընթացում.....……5

1.2. Ինտեգրված դասերի նշանակությունը, նպատակը և խնդիրները...……..……8

ԳԼՈՒԽ 2. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ

2.1. Ինտեգրումը ռուսաց լեզվի դասաժամին……...…10

2.2. Միջառարկայական կապերը նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ…..……13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....…..……17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...…..…..19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ներկայումս արդիական է գիտությունների ինտեգրացիան, աշխարհի ընդհանուր պատկերի մասին առավել ճշգրիտ պատկերացում ստանալու ձգտումը: Այդ գաղափարներն արտացոլում են գտնում ժամանակակից դպրոցական կրթության հայեցակետում: Բայց անկարելի է մեկ ուսումնական առարկայի շրջանակներում լուծել այդպիսի խնդիր: Ուստի ուսուցման տեսությունում և պրակտիկայում օգտագործում են միջառարկայական ընդհանրացումներ: Միջառարկայականության օգտագործումը նպաստում է սովորողների մտածողության, ինքնուրույնության, ճանաչողական և ստեղծագործական ակտիվության զարգացմանը:

Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիր- վող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

Միջառարկայական կապերի իրականացումը դպրոցում կարևոր դիդակտիկական խնդիր է, բխում է սիստեմատիկության դիդակտիկական սկզբունքից: Տարբեր ուսումնական առարկաներում գիտելիքների և մեթոդների այդպիսի փոխադարձ ներթափանցումը ոչ միայն կիրառական ու պրակտիկ նշանակություն ունի, այլև արտացոլում է գիտության զարգացման ժամանակակից միտումները, նպաստավոր պայմաններ է ստեղծում գիտական աշխարհայացքի ձևավորման համար: Նրանցից մի քանիսը վերաբերում են ռուսաց լեզվի դասերին միջառարկայական կապերի իրականացման նկատմամբ տարբեր մեթոդական մոտեցումներին, մյուսները պարունակում են միջառարկայական բնույթի նյութ, որը կարող են օգտագործել ուսուցիչներն իրենց աշխատանքում: Տվյալ խնդրին

վերաբերող գրականության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել միջառարկայական կապերի իրականացման հիմնական ուղղությունները:

Նշյալով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել միջառարկայական կապերի կիրառման ազդեցությունը սովորողների վրա ռուսաց լեզվի դասաժամերին: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Հետազոտության խնդիրները: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները* ՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Ներկայացնել ինտեգրված դասերի նշանակությունը, նպատակը և խնդիրները:
- Ուսումնասիրել ինտեգրումը ռուսաց լեզվի դասաժամին:
- Իրականացնել դաս նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ:

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Ինտեգրումը կրթական գործընթացում

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը:

Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները՝

- միջառարկայական (interdisciplinary),
- բազմառարկայական (multidisciplinary),
- անդրառարկայական (trans disciplinary):

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա:

70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նորտիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար, սինթետիկ, համատեղ դասեր[1]:

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են

միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում[2].

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,
2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,
3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,
4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,
5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ:

Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ[2]:

Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը

կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր:

Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար:

Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ[4]:

1.2. Ինտեգրված դասերի նշանակությունը, նպատակը և խնդիրները

Ինտեգրված դասի նշանակությունը – Միջառարկայական կապերի ստեղծումը ռուսաց լեզվի դասաժամերին ունի բազմակողմանի նշանակություն: Այն ապահովում է աշակերտների բազմակողմանի զարգացում, հաղորդվող նյութի արագ և հեշտ

յուրացում, աշակերտների մոտ հետաքրքրասիրության մեծացում, սեր առարկայի հանդեպ: Նմանօրինակ դասերը արթնացնում են աշակերտների մոտ աշխույժ մոտեցում ուսուցանվող նյութին և դասաժամը միօրինակ ու ձանձրալի չի անցնում:

Ինտեգրված դասի նպատակները - Ինտեգրված դասը հատուկ կազմակերպված դաս է, որի նպատակը կարող է հասանելի լինել միայն տարբեր առարկաների գիտելիքների միավորումից՝ ուղղված դեպի ինչ-որ խնդրի դիտարկմանը և լուծմանը: Ինտեգրված դասերը աշակերտին տալիս են աշխարհի, առարկաների և երևույթների փոխկապակցվածության մասին բավականին լայն և վառ պատկերացում: Հիմնական շեշտը այստեղ դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների ընկալման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա: Ինտեգրված դասերը թույլ են տալիս օգտագործել բոլոր ուսումնական առարկաների բովանդակությունը, ուշադրություն դարձնել գիտության տարբեր ճյուղերին, ենթադրում են սովորողների ստեղծագործական ակտիվության պարտադիր զարգացում: Դրանք ունեն մի շարք առավելություններ[3].

- ✓ ինտեգրված դասերը նպաստում են ուսուցման մոտիվացիայի բարձրացմանը, սովորողների ճանաչողական հետաքրքրության, ամբողջական գիտական աշխարհի պատկերացումների և երևույթների տարբեր կողմերից դիտելու ունակության ձևավորմանը,
- ✓ նպաստում են խոսքի զարգացմանը, սովորողների մոտ ձևավորվում են համեմատելու, ընդհանրացնելու, հետևություններ կատարելու հմտություններ, ուսումնադաստիարակչական գործընթացի ակտիվացումը թեթևացնում են սովորողների ծանրաբեռնվածությունը,
- ✓ նպաստում են անհատի բազմակողմանի զարգացվածությանը, ներդաշնակ և մտավոր զարգացմանը,
- ✓ ինտեգրումը հնարավորություն է տալիս փաստերի միջև գտնելու այնպիսի նոր կապեր, որոնք միավորում կամ խորացնում են սովորողների դիտարկմամբ արված որոշակի հետևությունները տարբեր առարկաներում:

Ինտեգրված դասի խնդիրները - Գիտությունների և արտադրության ինտեգրման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերի

պահպանումով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած տեղեկություններով, այլ՝ իրականությունը, միջառարկայական կապերով: Ուստի դասապրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի պահպանումն ունի բազմաբովանդակ խնդիրներ՝ սկսած աշակերտների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումից, վերջացրած՝ աշակերտի մոտ ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ցանկություն սերմանելուց:

Ինտեգրված դասի կառուցվածքը սովորական դասից տարբերվում է[1].

- ✓ սահմանված հստակությամբ, կոմպակտությամբ, ուսումնական նյութի համառոտությամբ,
- ✓ տրամաբանական փոխհամաձայնեցմամբ,
- ✓ դասի յուրաքանչյուր փուլում ինտեգրված առարկաների փոխկապվածությամբ,
- ✓ դասի ժամանակ օգտագործվող նյութի մեծ տեղեկատվական հզորությամբ:

Ինտեգրված դասերը միջառարկայական կապերի համակարգում կարևոր մաս են կազմում: Դրանք նպատակահարմար է անցկացնել ընդհանրացնող դասերի ժամանակ, որում ի հայտ են գալիս երկու կամ ավելի առարկաների համար կարևոր խնդիրներ:

ԳԼՈՒԽ 2. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ

2.1. Ինտեգրումը ռուսաց լեզվի դասաժամին

Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը ցույց տալու համար վերցրել եմ Ալեքսանդր Կոչետկովի «Баллада о прокуреппом вагоне» բանաստեղծությունը, որն ուսումնասիրվում է 9-րդ դասարանում:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, պետք է փորձենք գրավել աշակերտների ուշադրությունը: Դասի ժամանակ մի առարկան կապելով մյուս առարկաների հետ դասը ավելի հետաքրքիր, ինֆորմատիվ և արդյունավետ է դառնում: Մտածողության զարգացումը զգալիորեն խթանվում է, երբ ուսուցումը կազմակերպվում է հուզական մթնոլորտում:

Դասի ժամանակ աշխույժ, բարձր տրամադրությունը առաջացնում է հոգեկան ուժերի վերելք, ակտիվ ճանաչողական գործունեություն, ձանձրույթն ու անտարբերությունը չեն ճնշում աշակերտին: Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Միջառարկայական կապը ցանկացած առարկայի դեպքում շատ արդյունավետ է: Եթե երեխան գիտակցում է, որ այս դասի սովորածը կարող է կիրառել նաև հաջորդ դասին, ավելի ուշադիր և հետաքրքրված է լսում և մասնակցում քննարկմանը, փորձում է ինքն էլ գտնել կապ առարկաների միջև, այսպես նաև ավելի լավ է պատկերացնում սովորածի կարևորությունը և կիրառությունը:

Ուղղորդող հարցերի միջոցով աշակերտներին մղում ենք ակտիվ մասնակցության: Ձևավորված աշխատանքային խմբերը ստանում են հանձնարարություններ:

Միջառարկայական կապի հաստատումը ժամանակակից ուսուցման հիմնական պահանջներից մեկն է, որ փոխադարձաբար նպաստում է տարբեր առարկաների ուսուցման որակի և արդյունավետության բարձրացմանը: Կիրառվել են հետևյալ մեթոդները՝ խմբային աշխատանք, բաց հարցեր, քառաբաժան:

Բաց հարցեր մեթոդի միջոցով հավաքագրվել են տվյալներ:

• Հավաքել և համակարգել թեմայի պատմական գիտելիքները: Պատմության ռուսաց լեզվի միջառարկայական կապերի ապահովումը հիմնականում նպատակ ունի երեխաների միջև ճիշտ ձևավորելու ժամանակի ըմբռնումը մի բան, որը ուսուցման հիմնական նպատակներից մեկն է: Դասագրքերում եղած բոլոր այն նյութերը, որոնք պատմական բնույթի են, պետք է ներկայացնել ժամանակաշրջանի մասին ճիշտ պատկերացում տալով, ամենից առաջ գործողությունների պատմական ժամանակաշրջանը ներկայացնելով: Երեխայի վառ երևակայությունը նրան թույլ կտա ճամփորդել դարերի խորքը:

• Հավաքագրել սիրո և հավատարմության հետ կապված տեղեկությունները: Սա հնարավորություն է տալիս երեխաներին պատկերացում կազմել իսկական սիրո, հավատարմության, գեղեցկության և ամուր ընտանիքի մասին, հաղորդակցվել գեղեցիկի հետ:

• Հավաքագրել երգի ու երաժշտության հետ կապված տեղեկությունները: Դեպի գեղեցիկի աշխարհը երեխաների համար ճանապարհ պետք է հարթել բոլոր միջոցներով: Այդ միջոցներից մեկն էլ երգն ու երաժշտությունն են, որոնք լայնորեն կարող են օգտագործվել ռուսաց լեզվի դասերին, այն դարձնել հաճելի, գեղեցիկ, տպավորիչ ու անմոռաց: Դասին երգն ու երաժշտությունը կարող է օգտագործվել որպես ուսումնասիրվող նյութի համար ընդհանուր հենք: Օրվա դասերը երաժշտությամբ ամփոփելը կամ ավարտելը նույնպես բացառիկ կարևոր նշանակություն կարող է ունենալ ոչ միայն երեխաների հոգնածությունը ցրելու, նրանց աշխուժացնելու ու ակտիվացնելու, այլև ամրապնդելու տեսակետից:

• Հավաքագրել նկարների և նկարչության հետ կապված տեղեկությունները: Նկարները վճռական տեղ ու դեր ունեն ռուսաց լեզվի դասերին: Դրանք կարևոր ու անփոխարինելի միջոց են ուսուցողական ու դաստիարակչական նյութի առաջադրման համար, քանի որ բառերով այդ ամենը հաղորդելու հնարավորություն չկա: Ցուրաքանչյուր անգամ ուսուցիչը իր համար պետք է պարզի տվյալ նկարի հիմնական նպատակը և ապա նոր անցնի ուսուցման պրոցեսում դրա օգտագործմանը:

• Հավաքագրել աշխարհագրության հետ կապված տեղեկությունները: Աշխարհը ճանաչելը յուրաքանչյուր մարդու պարտականությունն ու երազանքն է, աշխարհն ու

աշխարհի մասին եղած գիտելիքները երեխաների համար ոչ միայն շատ մատչելի են. այլև գրավիչ ու հետաքրքրող, ուստի դրանք պետք է փոքրիկ, չափավորված միավորներով։

• Հավաքագրել տեխնիկական գիտելիքները։ Այսօրվա մեր կյանքը հազար թելերով կապված է գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերի հետ։ Ռուսաց լեզվի դասերին գիտատեխնիկական ինֆորմացիայի կարիքն ամեն օր կարող է ծագել, դա ժամանակի պահանջն է ոչ միայն դասի բովանդակությունն ապահովելու, այլև միջառարկայական կապերի պահպանման առումով։ Մենք ապրում ենք գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակներում, ուստի պետք է քայլենք ժամանակին համընթաց։

Հարցեր, որոնք ուղղվում են աշակերտներին

- Ի՞նչի մասին է բանաստեղծությունը
- Ի՞նչն է հուզում բանաստեղծին
- Ովքե՞ր են բանաստեղծության հերոսները
- Ի՞նչ գույն ունի սերը
- Ի՞նչ կարևոր իրադրություն եք վերհիշել
- Ո՞րն է բանաստեղծության երգային տարբերակը
- Ի՞նչ հասկացաք բանաստեղծությունից։

Օգնեցի սովորողներին բացահայտելու և խմբավորելու պատմության, մշակույթի, աշխարհագրության, գրականության, երաժշտության, նկարչության նյութերը տվյալ թեմայի հետ կապված, համագործակցելու ընկերների հետ՝ փաստարկված պաշտպանելով սեփական տեսակետը, հարստացնելու հանրակրթական գիտելիքները։ Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը, ընդհանրացնում, ծավալվում է հետաքրքիր և ուսուցանող քննարկում։

Աշակերտները նշեցին, թե իրենց կարծիքով ինչն է հուզում բանաստեղծին, ասացին երեք բառ, որոնք կարևոր են բանաստեղծությունը հասկանալու համար և ասացին մեկ միտք, որ ամփոփում է ամբողջ նյութը։ Նշվեց, թե որքանով է այս բանաստեղծությունը արդիական[5]։

Միջառարկայական կապերի շնորհիվ աշակերտներն առավել ոգևորությամբ են ներկայացնում թեման, նույնիսկ թույլ սովորող աշակերտներն են ակտիվ

մասնակցում: Թեման այնպիսին է, որ թույլ է տալիս առնչվել շատ առարկաների հետ, ուստի հետաքրքրությունների շրջանակը մեծ է և յուրաքանչյուր աշակերտ դրսևորվում է իրեն հոգեհարազատ և հետաքրքրող առարկայի շուրջ: Վերջում աշակերտները կատարում են «Баллада о пропуренном вагоне» երգը և ներկայացնում, թե ինչպիսին պետք է լինի սերը և ամուր ընտանիքը[6]:

Երեխաները արժևորեցին ընտանիքը և ընտանեական ջերմ հարաբերությունները: Կատարեցին քառաբաժան վարժություններ.

1. Ինչ էիք տեսնում 2.Ինչ էիք զգում 3. Ինչ էիք լսում 4. Նոր վերնագիր

Հասանք նրան, որ՝

- երեխաներն ամրապնդեցին իրենց գիտելիքները, հարստացրեցին
- ընկալեցին բանաստեղծության հիմնական գաղափարը
- ձևավորեցին ունակություններ իրենց սովորածը վերարտադրելու համար
- բացահայտեցին գեղեցիկը ընկալելու ընդունակություններ
- հետաքրքրություն ունեցան երաժշտության, նկարչության նկատմամբ
- լցվեցին ամուր և երջանիկ ընտանիք ունենալու գաղափարով
- կարողացան արդիականացնել թեման:

2.2. Միջառարկայական կապերը նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝ կարող է հանդես գալ

ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու պատճառները[8]:

Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը (45 րոպե, 90 րոպե): Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը[7]:

Ինտեգրված դասի պլան նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ

Առարկան՝ ռուսերեն, գրականություն, ինֆորմատիկա

Դասարանը՝ 10-րդ հումանիտար

Դասի տիպը՝ նյութի ամփոփում և գիտելիքների ամրապնդում

Դասի թեման՝ М. Ю. Лермонтов

Դասի նպատակը ՝

- ✓ աշակերտների մեջ զարգացնել դպրոցական տարբեր առարկաների միջև կապ տեսնելու և այդ կապը գործնականում օգտագործելու կարողություններ ու հմտություններ,
- ✓ բառապաշարի հարստացում,

- ✓ իմանալ ռոմանտիկական և գոթական գրականության գրողներին և նրանց աշխատությունները,
- ✓ զարգացնել աշակերտների բանավոր խոսքը, ստեղծագործական միտքը, լսողական հմտությունները:

Սովորողի ուսումնական ակնկալիքները՝

- ✓ Իմանալ, թե ովքեր են ստեղծագործությունների հեղինակները, ռուսական, հայկական և հունական էպոսները
- ✓ Կարողանալ հասկանալ ռուսերենով տրված հարցերն ու առաջադրանքները, կիրառել ՏՀՏ նորագույն ծրագրեր և կատարել առաջադրանքներ՝ օգտվելով էլեկտրոնային գրատախտակից, ստեղծել գրական անկյուն՝ իրենց ձեռքերով պատրաստված գեղարվեստական գրքերով

Դասի կահավորումը՝ համակարգիչ, պրոյեկտոր և մեծ էկրան, էլեկտրոնային գրատախտակ, գրապահարան, որտեղ պիտի դրվեն գրքերը (աշակերտների ներկայացնելուց հետո), գրողների նկարներ, ուսուցանող գնահատման պաստառ, գունավոր մարկերներ:

Դասի ընթացքը

Բանավոր հարցում՝

1. Գիրք/գրականություն եզրույթով կազմակերպել «Մտագրոհ»՝ անդրադարձ կատարելով նախորդ դասի թեմայի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքներին:

2. Էլեկտրոնային գրատախտակի վրա Smart Notebook 11 համակարգչային ծրագրով կազմված առաջադրանքների միջոցով աշակերտները էլեկտրոնային գրչով ընտրում են ռուսական գրականության ստեղծագործությունների հեղինակների անունները՝ ճիշտ պատասխան ստանալու համար:

Յուրացված նյութի ներկայացում՝ կատարվում է հետևյալ առաջադրանքով՝ նշել հեղինակի և ստեղծագործության անվանումը և համառոտ պատմել այդ ստեղծագործության մասին (М. Ю. Лермонтов):

Առաջադրանքների կատարում՝ ստացած գիտելիքներն ամրապնդելու նպատակով կկատարվեն մի շարք բանավոր առաջադրանքներ ռուսերենով՝

1. օգտվելով դասագրքի բառերից՝ կնկարագրեն գրքերը, ինչպիսի գրքեր կան, և որն է իրենց սիրած ստեղծագործությունը, կներկայացնեն իրենց պատրաստած գեղարվեստական գրքերը,
2. կդիտեն տեսանյութը ռուսերենով, որտեղ ներկայացված են М. Ю. Лермонтов-ի կյանքը և նրա աշխատությունները,
3. կկատարեն լսողական առաջադրանքներ:

Պատմական ակնարկ՝ աշակերտները «Սասունցի Դավիթ» հայկական էպոսը ռուսերենով կհամեմատեն հունական, հայկական և ռուսական էպոսները:

Դասի ամփոփում՝ աշակերտները, օգտվելով էլեկտրոնային գրատախտակից, կհամապատասխանեցնեն գրողների և ստեղծագործությունների անվանումները:

Գնահատում՝ ամփոփիչ, ուսուցանող (լսել աշակերտների կարծիքն այն մասին, թե ինչ սովորեցին, ինչով էր այդ դասը տարբերվում մյուս դասերից, ինչը դուր եկավ, և ինչը հանդիսացավ խոչընդոտող հանգամանք): Վերջում աշակերտները նախօրոք պատրաստված ուսուցանող գնահատման սանդղակով կգնահատեն իրենց և կփակցնեն պաստառի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով սույն ավարտական աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

- Միջառարկայական բնույթի խնդիրների լուծումը հնարավորություն է տալիս հարակից առարկաներից ավելի վաղ ուսումնասիրած հասկացություններն ու օրենքները կիրառել այլ առարկայի գիտելիքների համակարգում: Այդ խնդիրների կազմումն ու լուծումը նպաստում են ճանաչողության գործընթացի ակտիվացմանը, որոնք ոչ միայն հետաքրքիր են, այլև բացահայտում են սովորողների ստեղծագործական ներուժը, զարգացնում պատկերավոր մտածողությանը և նպաստում են նրանց գիտական աշխարհայացքի ձևավորմանը:
- Եղած առավելություններով հանդերձ, տարբեր առարկաների հատման տիրույթին վերաբերող միջառարկայական բնույթի խնդիրները դպրոցական խնդրագրքերում գրեթե բացակայում են, որոնց պատճառն այն է, որ միջառարկայական բնույթի խնդիրների լուծումը պահանջում է անհրաժեշտ գիտելիքների իմացություն հիմնական և հարակից առարկաներից, ինչպես նաև լուծման յուրահատուկ մեթոդների կիրառման կարողություններ և հմտություններ:
- Շատ թեմաներ կան, որոնց ուսումնասիրությունը պետք է ուղղակիորեն շաղկապված լինեն հարակից առարկաներից ձեռք բերված գիտելիքների հետ, եթե անգամ տվյալ նյութը մյուս առարկայից անցել են այլ դասարանում նրանց համար կլինի կրկնություն և գիտելիքի վերաարժևորում: Ինչը նպաստում է կրտսեր դպրոցականի խոսքի զարգացմանը, մտահորիզոնի ընդլայնմանը և ստեղծագործական ունակությունների կատարելագործմանը:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման

գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:

Միջառարկայական կապերի ներգրավումը բարձրացնում է ուսուցման գիտականությունը, մատչելիությունը, տեսությունը հագենում է պրակտիկ բովանդակությամբ:

Առաջարկություններ

Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն հետևյալ գործողությունները՝

1. Որոշել ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
2. Որոշել համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,
3. Որոշել ինտեգրման ձևը,
4. Որոշել միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,
5. Որոշել նյութի հաջորդականության կառուցվածքը,
6. Որոշել նյութի ներկայացման միջոցները,
7. Կատարել դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
8. Առանձնացնել տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնաուդյան, Սիրամարգ Վարդումյան, Իզաբելա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան, «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Երևան, 2003թ., 256 էջ:
2. «Ինտեգրումը կրթական գործընթացում» - Փնջոյան Տ.-2018թ.
3. Браже Т.Г. Интеграция предметов в современной школе. //Литература в школе. № 5, 1996, с.59-63.
4. Данилюк А. Я. Учебный предмет как интегрированная система. // Педагогика, №4, 1997, с. 89-92.
5. Зверев Д.И., Взаимная связь учебных предметов, М., Знание, 1977 с. 64-69.
6. Коложвари И., Сеченикова Л. Как организовать интегрированный урок? //Народное образование 1996, № 1, с. 47-51.
7. Чепиков М.Г. Интеграция науки, М., Мысль, 1988, 135 с.
8. «Анализ современного урока» С.В. Кульневич, Т.П. Лакоценина